

Յակոբի վանքը 1903ին, և իր քննութեան արդիւնքը հաղորդած է տեղեկագրով մը (Ազգայն. էջ 6223): Վախճանած է 1912ին:

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ (ԲԱՐԹԻԿ) ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ, ՊՈԼՍԵՅԻ.—Ս. Յակոբի վանքին Կ. Պոլսոյ վազըժներուն երկարամեայ նապին. կը վախճանի 1922ին:

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՎՐԴ.—Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը Կրիգոր պարք. Պարոնտէրի ժամանակ, և նշանաւորութեամբ կը մասնակցի վանական նորոգութիւններուն. ըստ յիշատակարանի Նազարէք Դպրի (ՄԶ. թ. 322):

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՎՐԴ. ԹԱԳԱՃԵԱՆ, ԶԷՅԹՈՒՆՅԻ.—Ծ. 1849ին, Հայրը՝ Սուքիաս, Մայրը՝ Մարիամ, Մը. Ֆռնուզի վանքին, Զէյթուն. Զռ. 1888ին, վանահայր նոյն վանքին 1888-90, Զէյթունի ազգ. խնդիրներու պատճառաւ կը բանտարկուի Հալէպի մէջ 1890-91, Բ. անգամ վանահայր 1891-95, նոյն խնդիրներու հետեւանքով կրկին կը բանտարկուի Մարաշի մէջ: Բանտէն արձակուելէ վերջ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1897ին, կը հաստատուի Եգիպտոս 1898-1908. ուրկէ կը մեկնի եւ կը մնայ Զէյթուն եւ Սիս 1908-10, 1910ին Կիլիկիոյ Սահակ կթղ. ին կոնգակոյն, ի նպատակ Սոյ աթոռին, դրամահաւաքութեան համար կ'ուղևորի Զմիւռնիա, քաղաքական դէպքերու բերումով չկրնար ձեռնարկել դրամահաւաքութեան և նոյն տարին կը վերադառնայ Ֆռնուզ, որուն վանահայրութիւնը դարձեալ կը վարէ 1910-15: Զէյթունի ժողովրդեան հետ կը տարազրուի Գոնիա, ապա Հալէպ և Իպլիս. 1916-18: Զինադադարին կը դառնայ Ֆռնուզ. բայց մնացորդ ժողովրդեան հետ դարձեալ կը տարազրուի Մարաշ և Զերմուկ 1919ին, ուրկէ Հալէպ վերադառնալով՝ կ'ապաստանի Ս. Յակոբի վանքը ուր կը մնայ այժմ եւ կը ծառայէ Ս. Տեղերուն:

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՎՐԴ. ՆԻԿՈՄԻԴԱՅԻ, Մը.— Զռ. 1820՝ փետր. 11ին Նիկոմիդացի Գաբրիէլ պատրիարքէն, որ Զմիւռնիայէն վերադարձին 1834, հաւանաբար Բեթլէհէմի Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ հաստատած է սոյն Նիկոմիդացի Բարթուղիմէոս վրդ. ի յիշատակին համար, հետեւեալ յիշատակարանը: